

**XX ԴԱՐԻ ՍԿՁԲԻ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՐՏԱՇԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ԳՆԱՀԱՏՄԱՄԲ**

Ա. Գ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Բանաստեղծ, արձակագիր և գրաքննադատ Արաաշես Հարությունյանը գրական ասպարեզ է մտնել չափածոյով: Նրա բանաստեղծական ժառանգութունն իր ինքնատիպ մտածողությամբ և գեղարվեստական հարցադրումներով XIX դ. վերջի և XX դ. սկզբի արևմտահայ պոեզիայի զարգացման կարևոր օղակներից է: Հարությունյանն ունի նաև խոհափիլիսոփայական արձակ էջեր, որոնք մեծ մասամբ ըստաստիական խորհրդածություններ են բնության ու կյանքի մասին, խոր ընգհանրացումներ՝ գրականության, գրական սեռերի և ուղղությունների: Վերաբերյալ: Բանաստեղծություններ ու արձակ էջեր, գիմաստվեբներ ու գրախոսություններ, քրոնիկներ, հրապարակախոսական հյուլիներ, մանկավարժական-հոգեբանական ուսումնասիրություններ, գրական-տեսական բանավիճային հոգվածներ, կրոնարարության հարցերի քննություններ, ոուս և արևմտաեվրոպական նշանավոր գրողների գրական վաստակի արժեքավորումներ, ֆրանսերեն լեզվով գրախոսություններ ու թարգմանություններ, հարուստ նամականի՝ տհա Արտ. Հարությունյանի ստեղծագործական ժառանգության ամփոփագիրը:

Դժվար է ներկայացնել գրական շարժման բնութագիրը, երբ այն լրիվ է: Ղրսևորվել, և գրողի ստեղծագործական վաստակը արժեքավորել, երբ այն լյատմութուն չի գարձել: Գրականության պատմության համար կարևոր է, ինչ գրողը ինչպես է գնահատվել: Ժամանակակից մշակութային պրոցեսում: Այս սուտումով ժամանակի ստեղծագործողների մասին Հարությունյանի արժեքավորումները տասնամյակներ անց էլ այժմեական են ու քննություն են բռնում: Նա կարողացել է առաջին իսկ երկի հիման վրա կռահել ու ցույց տալ ճշմարիտ տողանդի ինքնատիպությունը, կանխատեսել նրա հետագա զարգացման ուղին: Այսպես՝ 900-ական թվականներին բուռն հետաքրքրության արժանացավ Զապել Ծսայանի գրական վաստակը: Մամուլը հեղեղվեց վիպասանուհու տաղանդը գնահատող հոգվածներով: Սակայն որոշ քննադատների ներհակ տրամադրությունները փորձեցին ստվերել վիպասանուհու ստեղծագործական վաստակի ինքնատիպությունը: Շատերի հետ Զ. Ծսայան-գրողին պաշտպանող հոգվածներով հանդես եկավ Օ. Զիֆթե-Սարաֆը («Արվեստագետ ամուլին շուրջը»¹ և այլ գրախոսություններով): Վիպասանուհու սմե-նաչեքս պաշաւանը Արտաշես Հարությունյանն էր²: Ընդունելով, որ «ամեն ոք իր սեփական ճշմարտությունն ունի», քննադատն ընդգծում է. «...մարդկային ազգին համար հասարակաց ճշմարտություններ կան, որք նույնն են բոլոր բնօրինավոր մտքերու և զգացողություններու տեսակետեն»³: Այս առումով Արտ. Հարությունյանը վիճում է այն քննադատների հետ. «առանձնապես Արամ Անտոնյանի», որոնք փորձում են աղմուկ հանել որպես «պարզ վիճասեր էլ, անբարեմիտ ...յուրյանց հակառակասիրության ոգիին մեջ»⁴: «Վիճարանություն մը»⁵ հոգվածից գատ «Բյուզանդիստում» Արտ. Հարությունյանը հանդես է գալիս «Տիկին Զապել Ծսայան» գրախոսականով⁶: Ըստ քննա-

¹ Արևելյան մամուլ, Զմյուտնիա, 1906, № 14, էջ 329—335:

² Տե՛ս Օ. Արդումյանյան, Զապել Ծսայան, Երևան, 1965, էջ 81—89:

³ Արևելյան մամուլ, 1906, № 18, էջ 442:

⁴ Կույն տեղում, էջ 444:

⁵ Նույն տեղում, էջ 442—445:

⁶ Բյուզանդիստ, Կ. Պոլիս, 1907, № 317:

դասի, ժամանակի սուր զգացողությամբ օժտված արվեստագետ է Ջ. Ծսայանը, մարդկանց ճակատագրով մտահոգված քաղաքացի։ Նրա ստեղծած երկերը ներքին տրամաբանությամբ շաղկապվելով, գալիս հանդում են զաղափսրական մի կետի՝ բարու, գեղեցիկի, խաղաղության ու մարդկային իղբալենների հաղթանակի կենսական պահանջին։ Մարդկային զգացումների «գեթանական հիմնավորումն ու դրանք իրապաշտ արվեստով բացատրելու շարունակյալը գիտում է որպես ստեղծագործական ճամբարիտ ուղի, որն ավելի խորանում ու ընդլայնվում է վիպասանուհու մյուս երկերում։ Քննադատը երկի գեղարվեստական արժեքը պայմանավորում է նաև կերպարի նաևուրալ-հոգեբանական նկարագրությունով. «Իր հերոսներն ընդհանրապես շատ շեն խոսիր... Իր բոլոր տիպարները գիմադրիտորեն ուսումնասիրված բնույթով են... ամեն մի գիծ, ամեն մի կնճիռ, ամեն կարկանդակ նշանակություն մ'ենին կարծես, Տ. Ծսայան հաղվագյուտ գիտողությամբ մը կ'կենդանացնեն բոլոր աննշան մանրամասնությունները... Իր բոլոր դեմքերը կ'գիմակավորեն տառապելու հեշտախոսն վարակված հոգիներ, որոնց նկատմամբ անսահման համակրանքով կ'արամագրվի ընթերցողը»⁷։

Արտ. Հարությունյանը գնահատում է վիպասանուհու երկերի ոեակականությունը, եվրոպական վիպագրության և հայ ոեակիստական գրականության ավանդները՝ միասնության դրսևորումները, իրականության հասարակական-սոցիալական բովանդակության յուրատիպ պատկերումը։ Քննադատն ընդգծում է նաև բնապատկերների իմաստասիրական, հերոսի հոգեկան աշխարհը բացահայտող նշանակությունն ու գեղարվեստական արժեքը, «Բնության հանդիսարանը, բույրերը, գույները, գիծերը,—բոլոր զգացումներն ու բոլոր զգացողություններն իր մոտ՝ սուր ու խորաթափանց հեշտանքի մը համար պատրվակներ են,—գրում է Արտ. Հարությունյանն ու ավելացնում,—... Անոր շնորհիվ է, որ տիկին Ծսայանի գրականությունը ոչինչ չունի բռնադրոսիկ, այնքան ինքնաբերի է ու համակիչ»⁸։

Գարսեղյանի արևելահայ գրական-քննադատական միաբեր միանգամից շնչունեց Շիրվանզադեի գեղարվեստական ստեղծագործության հասարակական արժեքը։ Նրա երկերը համարվեցին աղգային կյանքի ոչ լիարժեք պատկերներ⁹։ Լեոն, տալով Շիրվանզադեի գրական ժառանգության բնութագիրը, գալիս էո սյն եզրահանգման, որ վիպասանն առհասարակ չի կարողանում թափանցել իր հերոսների հոգեկան աշխարհը, ստեղծել լիարժեք կերպարներ, անել խորը վերլուծումներ։ Ըստ քննադատի, գրողի ստեղծած կերպարները գաղափարական խոսափողնեո են, որոնք անսպասելիորեն յ։ հայտ են գալիս միպական գործողություններում։ Լեոն շնչունեց «Քառս» վեպի ոեակիզմի խորությունը և, դարգացնելով իր անսակեաը, Շիրվանզադեի երկը զրկում էո գաղափարական նպատակասլացությունից, եղած արժեքավորն էլ համարում ենթագիտակցական մտածողության արգյունը, վիպասանի ստեղծագործական ելակետը հանդեշտում «Գեղարվեստը գեղարվեստի համար» ոչ ճիշտ մեկնաեետե¹⁰։

Քննադատն անսեսում էր նաև Շիրվանզադեի երկերի սյուժետային տարրերի, պատկերավորման միջոցների, լեզվական առանձնահատկությունների հաջողվածությունը, թերարժեքում գրողի ստեղծագործական երևակայությունը. «Շիրվանզադեն կարծես վեպ չի գրում, այլ պաշտոնական արձանագրություններ»¹¹։ Գրական-պատմական այն շրջանում, երբ «Թիֆլիսում հայ հասարակությունը ունեիլով էր գուրս բերել ոուսահայ լրագրերի բերանից մի քանի աներողամիա» խոսքեր¹², Պոլսում Տիգրան Կամսարականի նախաձեռ-

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում։

9 Տե՛ս Գործ, Թիֆլիս, 1908, № 36։

10 Լեո, Ռուսահայոց գրականությունը, Վենետիկ, 1904, էջ 323—325։

11 Նույն տեղում, էջ 26։

12 Տե՛ս Արտ. Հարությունյան, Շիրվանզադե և իր գործը, Կ. Պոլիս, 1911, էջ 7—8։

նախկին տոնվեց Ալ. Շիրվանդազեի սահղծագործական կյանքի 30-ամյակը: Ի թիվս արևմտահայ տասնինն երախտավորների, գրողի սահղծագործական ժառանգության արժեքավորումով հանդես եկավ նաև Արաաշես Հարությունյանը:

Ի մի բերելով նախորդ գրական սերնդի (Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Լ. Գառնաշենյան, Գր. Արծրունի, Բաֆֆի) ստեղծած հասարակական-գեղարվեստական արժեքը, Արտ. Հարությունյանը բացահայտում է գեալիստ արվեստագետի առաջագեմ աշխարհայացքը: Ըստ նրա, իրականության գեղարդիստական հակահիշները Շիրվանդազեի երկում ներկայանում են օբյեկտիվ (իրականություն) և սուբյեկտիվ (մարգկային գնահատական) կողմերի անխզելու միասնությամբ: Ֆննագատն արվեստագետի իսկական կոչումը տեսնում է կյանքն արգեստի սիջոցով վերակերտելու ձգաման մեջ:

Արտ. Հարությունյանը Շիրվանդազեի սահղծագործական ժառանգությունը գնահատում է որպես գեղարվեստական մտածողության նոր որակ: Վերջինս պայմանավորում է վիպական կերպարների օբյեկտիվությամբ, նրանց հոգեբանական իսկատիպ ապրումներով: Ավելին, հերոսներից յուրաքանչյուրն ունի անհատական առանձնահատկությամբ պայմանավորված վարքագիծ: Արտ. Հարությունյանը գնահատում է տիպերի լիակատար ինքնուրույնությունը, և կյանքի ռեալիստական պատկերումով վիպասանի գաղափարական սկզբունքները գտնում են իրականության ճանաչողություն միջոց: Հարությունյանն արժեքավորում է նաև երկրի սոցիալ-աղգային բնութագրերը, սյուժետային դինամիզմը, ժողովրդական մասսայական տեսարանների վարպետ պատկերումը: Ըստ քննագատի, Շիրվանդազեի պատկերած տիպերը շարժվում, գործում են իրենց նկարագրի, գիրքի, կրթության, հակումների ինքնատիպությամբ: Դրանք իրական, ամիս ու արյուն ունեցող արարածներ են և շարժվում ու գործում են անհատական տրամաբանությամբ և հոգեբանությամբ: Երկի հերոսները ներկայանում են որպես կյանքը ղեկավարող օրինաչափությունների ծնունդ և կրում են այդ օրենքների աղգեցության կնիքը:

Շիրվանդազեի գեղարվեստական ստեղծագործությունը քննելով իրապաշտ ուղղության տեսանկյունից, Արտ. Հարությունյանը մեկ առ մեկ վեր է հանում ռեալիստական արաացուման հիմնական գծերը, վիպասանին որակում հզոր ու մեծ, նրան գնում Տոլստոյի, Բալզակի կողքին: Արտ. Հարությունյանը ճիշտ է ըմբռնում գեղարվեստական արաացուման սկզբունքի ելուկետային խնդիրները: Նույն ժամանակահատվածում են գիտական հիմնավորումներով, ռեալիստական գրական ուղղության առանձնահատկությունների բացահայտումով:

Քննագատ Հարությունյանը վերլուծում է ղգացմունքային անմիջականություն ու հոգեկան տագնապով: Հոգված-գրախոսություն ներկայացնելու նրա եղանակները տարբեր են, վերլուծական մեթոդը՝ գինամիկ: Ռուրեն Զարդարյանի «Ցայգարույս» ժողովածուի գրախոսականը երկի վերլուծում-գնահատում լինելուց գատ, քննում է հեղինակի հոգեկտն ապրումների ընթացքը, գրողի հասարակական-քաղաքական, ինչպես նաև անձնական վարքագիծը, աշխարհայեցողությունը, նրա գրական ժառանգությունից բխող պատգամատելիքը: Բ. Զարդարյանի ժողովածուն քննագատը գնահատում է պատմական-քաղաքական, գրական-հասարակական տվյալ հանգամանքներում ասելիքի այժմեականության շափանիչներով: Գրողի ստեղծած պատկերային համակարգում Արտ. Հարությունյանը նկատում է ժտարտամ, բայց հմայիչ իգեալներու աշխարհ մը»¹³: Վերջինս, տիրող քաղաքական ռեալիստի պայմաններում, ներկայացնում է Զարդարյանի մաքառման, ընգվղումի, հայրենասիրական դաղափարներն ու տրամագրությունները:

¹³ Ագատամարտ, 1911, № 46, էջ 721:

Անգրադառնալով «Վաղվան գրականության» խնդիրներին, գրականություն, որ «...հոռի ձգտումները քննադատելու և մտածման նորագույն հորիզոններ ու գրական նորագույն սրբալույսներ մատնանշելու»¹⁴ առաքելություն ունեն, քննադատը Ջարգարյանի ստեղծագործական վաստակը քննում և արժեքավորում է այդ տեսանկյունից: «Վաղվան գրականությունում» առաջ քաշված լեզվի արքրը կարևորվում էր արևմտահայ մտավորական շարժման մեջ: Աշխարհաբարի ինքնորոշման և ինքնահաստատման շրջանում այն իրոք լիտում էր գրականության դարգացման կենսական շահերից: Արտ. Հաբուլյունյանը վերջնականապես լուծված էր համարում գրական լեզվի խնդիրը: Խոսք կարող էր լինել միայն այդ լեզուն գավառարարառենբրի ավելի կենսունակ ձևերով հարստացնելու մասին: Այս առումով քննադատն անդրադառնում է Ռ. Ջարգարյանի երկերի լեզվական առանձնահատկություններին, բարբառային բառերի օգտագործմանը, որոնցով հեղինակն ստեղծում է «ճղճիչ կրած շտուկներ մը, զուլալ առվակի մը անուշ երգը...»¹⁵:

Արտ. Հաբուլյունյանի գրախոսություններից յուրաքանչյուրն ունի ասելիքի նոր մեթոդ: «Յեղիս սիրտը» ժողովածուն գնահատելիս նա որպես շարժանիչ է ընդունում գրողի տաղանգը, աղգային ողբերգության մասին պատմող այս մատյանը գիտում է որպես իսկական «ցեղին սիրտ», համընդհանուր սրբալույսը բարբառող եղբրամատյան, որի անուրանալի արվեստը թույլ է տալիս բանաստեղծին դասելու հայ «մշտանմահ» երախտավորների շարքում: «Դանիել Վարուժան,— գրում է Արտ. Հաբուլյունյանը,—...հին զարհրեն ու հին ավանգուստներն կուգա մեղի: Պիտի ըսելի, թե ծովերու սրտեն գուրս եկող հրեղեն եղբգի մը փողեն ծնունդ առած առասպելական պատանեկիկ մըն է ան, բոցեղեն մազերով ու արեգակե աչքերով, որ մեզի կուգա պատգամել հեթանոս հայության հինավուրց քնաղգներն, որ տաղերգել կուգա մեղի՝ ցեղին սիրտը (ընդգծումը մերն է—Ա. Ն.): Ողջույն ուրեմն նորաստեղծյալ հեթանոսական ծիրանի հանճարին, ...աստվածընտիր օծյալին, հայ բանաստեղծին»¹⁶: Քննադատը «Չոնը», «Նեմեսիսը», «Վահագնը» բանաստեղծություններն արժեքավորում է որպես ձևի ու բովանդակության կատարելություններ՝ օժտված «առնագեղ կորովով»: Արտ. Հաբուլյունյանը գնահատում է Դանիել Վարուժանի ստեղծագործական երեակայության անշարժի ուժը, աղգասիրությունը և երկու տողում ամբողջացնում արվեստագետի շարժման վաստակի նկարագիրը: «...խորապես ավանդականորեն հայ հոգի մը՝ ի սպաս եվրոպական արվեստին»¹⁷:

Քննադատը բարձր է գնահատել նաև արևմտահայ գրաքննադատական մտքի բացառիկ գեմքերից մեկի՝ Արշակ Չոպանյանի գրական ծանրակշիռ վաստակը: Նա ընդհանուր գծերով ներկայացնում է Չոպանյանի ստեղծագործական գիմանկարը և գրականագիտական ներգրումները: Հայ ժողովրդի օրհասական մաքառումների պահերին Ա. Չոպանյանը խորապես կռահեց գոյատևման փիլիսոփայության գաղտնիքը, խորը համոզմունքով հոգ տարավ աղգային հանճարի մասունքների պահպանման ու հավաքագրման համար: Արտ. Հաբուլյունյանը նրան համարում է լայնահայաց մշակութային գործիչ:

Գրականության առողջ գաղափարամիտումները պահպանելու և դարգացնելու Ա. Չոպանյանի ջանքերը քաղաքական ու գաղափարական որոշտկի մտահայացքով գրեթե լեզվից հատկապես լեզվաբանական փուլակի դիվանը», «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը» ուսումնասիրություններում: «Կրնամ ըսել,— գրում է Արտ. Հաբուլյունյանը,— թե պ. Չոպանյան մեր լավագույն քննադատն է... հմտական պաշարով և գիտությունամբ պարենավորված է՝ հին և նոր միջաղգային գրականության օվկիա-

14 Արտ. Հաբուլյունյան, Գիշերվան համփորդը, Երևան, 1968, էջ 340:
 15 Նույն տեղում, էջ 223:
 16 Նույն տեղում, էջ 269—270:
 17 Նույն տեղում, էջ 272:

նուսեն. ...Այգ է պատճառը,—ավելացնում է քննադատը,—որ ինք բնավ չի նմանիր մեր կարգ մը այն բեռնարարձ բանահավաքներուն, որոնց տնկենդան ցամաքությունը հանգուրժելի չէ միշտ: Դոկյումանը Զոպանյանի մոտ կանգ կառնե և կապրի: Ահավասիկ երևույթ մը՝ այնքան հազվագեպ մեր մեջ»¹⁸: Քննադատն առաջադրում է հայ սշակույթի երախտավորին մատուցել ազդի հատուանառ հավաստիքը և տոնել նրա դրական գործունեության 25-ամյա տոնելիցը: «Մենք պետք չունենք սպասելու, որ մեր փառքերը մեռնին և սուգի անօգուտ պսակներ ղրկենք անոնց հողակույտերուն»¹⁹,—գրում է Արա. Հաթուրումյանն ու ավելացնում, որ հանգիստությունները ոչ թե մեծացնում են աաղաչի շափր, այլ գառնում են բարոյական, հոգեկան խթան և միտքամառնակ՝ արժանին գնահատելու ընդունակություն, ազգային երախտագիտության ղրակողման արտահայտություն:

Արաաշես Հարությունյանին հուղել է հայ մեծ երգահան Կոմիտասի կյանքը. «...Կոմիտաս վարգապետի նվիրական տնձը կոչված է ճակատագրական բաթիքը բերելու հայ ցեղին... որուն ամենն հարագաա ու կենդանի ակունքներն կրխի»²⁰: Ըստ Արաաշես Հարությունյանի, ժողովրդական շունչ ու ոգի ունենցող երգերը դառնում են հանուր մարգկության սեփականություն, քունզի օժտված են մարգկային ինքնաբուխ ղարդացումների բարախով. «Վասնզի երգական գեղջուկ երաժշտությունը թերևս այն տիգերական տմենահաղորդ լեզուն է. որով ընդունակ է բարրառելու ցեղ մը, իր ամենն լճիտ և հատկանշական ընագղներուն միջեն, առով հասկանալի ըլլալով ընգհանուր մարգկության»²¹: Քննադատն առաջարկում է մոոացությունից հանել և ուսումնասիրել հայ աղգային երգերը: Այս առումով էլ Կոմիտասը գառնում է հայ հոգևոր մշակույթի «...ներկայացուցչական գեմք մը», որ հղոր տաղանդով կարողացել է հղկել ու բյուրեղացնել ժողովրդական երգը, ստեղծել անզուգական գոհարներ: Գրողն ավելորդ է համարում շեշտել հայկական ժողովրդական երգերի բոլոր հատկանշական գծերը, բայց չի մոոանում գնահատել հայ երգարվեստի ուսուցչականի՝ Կոմիտասի «300 երկսեռ ձագուկներից» բաղկացած խմբի ընորհաշատ գործը, որ «...իրարու քով բերված Հայաստանի գավառներն, մեղի կխոսեն իրենց հողին ու ջուրին վրա... դարերով ճնշված այլ հայկիտյան ազաարաղձ հոգիներով»²²: Ժողովրդական երգերի մշակման ու գործաոություն մեջ գրողը տեսնում էր ժողովրդի ինքնության ու ազգապահպանման խորին խորհուրդ, որը կարևոր ու խորիմաստ արժեք է սաանում դարասկզբի արևատահայ աշխարհի համար. «Հայ գեղջուկ երաժշտության ոգին պետք է տարածվի աբորջ հայ ժողովրդի հոգիին մեջ, ու վերակենդանացնի զայն հինավուրց երազներուն ու հույսերուն համեմաա, վասնզի ինծի կթվի, թե այնպիսի ժամանակի մը մեջ, ուր ըլլալու կամ չըլլալու բախտեր կվճռվին, մեր ցեղը պեաք ունի ինքղինքը գտնելու, ինքղինքը ղգալու, և ընդհանրական վերաղարձ մը, օտարոտի սահմաններե դեպի հարաղատ ակունքը ցեղային բնագղներուն»²³:

Գրական-պաոմական անցյալի գիրքերից հետաքրքրական է նաև, թե որքանով են օբյեկտիվ իր ժամանակի գրողներին ուղղված Արա. Հարությունյանի դետողություններն ու խորհուրդները: Այս հարցում էլ քննագատը միշտ շափի ղգ:սցողություն մեջ է:

Ներկայացնելով Լևոն Շանթե սանղծագործական աոացին ղրջանի երկերը («Դուրսեցիները», «Դարձը», «Ծրագ օրեր», «Դերասանուհին», «Վերծին»),

18 Նույն տեղում, էջ 263—264:

19 Նույն տեղում, էջ 286:

20 Արագած, Նյու-Յորք, 1911, № 2, էջ 7:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում, էջ 8:

23 Նույն տեղում:

քննադատը նշում է. «Շանթ՝ տենդենցիոզ վիպասան մըն է», որը փորձում է վերաշինել կյանքը, և թիր վեպիկները վերաշինության փորձեր են»²⁴:

Ըստ քննադատի, դեղարվեստական այդ երկերը, «շինիչ պատմություններ են», իսկ կերպարները՝ «ճառարխոսներ»: Թերես նույն համոզմունքով էլ 1898-ին Ա. Շիրվանզադեն դրում էր. «Մենք կարոտ չենք հեղինակի (Շանթի—Ա. Ն.) հերոսների գրքերից քառած դատողություններին, ոլերճախոսության, մենք նրանցից պահանջում ենք կյանք, նրանք պիտի ներկայանան մեզ պատկերներով, դորձելով, շարժուն, կենդանի պիտի աղյուս, մտածեն, Վգան և ոչ թե դատողություններ անեն»²⁵: Նույն ելակետից էլ «Վերժինեի» առիթով Արա. Հարությունյանը գրում էր. «...իր տիպարները մեր իրականությունեն առնված տիպարներ չէին կրնար եղած ըլլալ: Անոնք շինծու տիպարներ են ուրեմն.... Անշուշտ պոլսահայ կյանքին մեջ իրապես ռոյություն չունին անոնք այսօր»²⁶: Քննադատը Շանթի երկերի թեոթությունների կողքին լի մոռանում նշել նաև, որ թիր վիպող Շանթ ճարտար, հաճելի, տաքուկ պատմող մըն է: Իր ախարներուն հողերանությունը միշտ լավ ուսումնասիրված է: Երկրորդական դեմքերն իսկ, և մանավանդ անոնք, բարախուն կենդանություն մըր ուղի վրա են, ու չափազանց կենդանի՝ իրենց խոսքերուն ու շարժումներուն մեջ: Շանթ հիանալի դիտող մըն է»²⁷: Այս ամենին Արա. Հարությունյանը ավելացնում է նաև հայ քերթության մեջ նրա բերած առժանիքը «Շանթ՝ ոտտնավորին մեջ աշխարհաբարի հաղթանակին վերջին հարվածը ավազ»²⁸:

Եվրոպական գրականությանը լավատեղյակ Հարությունյանը ժանրի դասական ըմբռնումով ստեղծեց դիմանկարներ, որոնք արևմտահայ գրականության մեջ առանձնանում են քննադատական հետադոտական ընդլծումով:

Ի տարբերություն հուշագրային կենսագրական դիմանկարների (Տ. Համսարական, Գ. Զոհրապ, Սիախի, Մ. Մամուրյան, Ա. Նազարյան և այլն) Հարությունյանի դիմանկարներուն առանձնահատուկ ուշագրության է արժանատի զգալի մարդկային, գրական-դեղարվեստական անհատականությունը, հանգամանորեն բացտհայտվում անձնական-հասարակական կյանքի տմրողական նկարագիրը, վերլուծվում է գրական ժառանգության դերն ու նշանակությունը, ավելին, գրական դավանանքի կողմնորոշման ու սյատմական միջավայրի ոլորտում է արժեքավորվում երկի առանձնահատկությունը²⁹:

Քննադատը «Գրքեր և դեմքեր» շարքում անդրադարձել է ժան Մորեսանի, էմիլ Վերհարնի, Ռեմի դը Գուրմենի, Պիեռ Քիեաոի, Շառլ Վաղնների, Շառլ Գեոննի, Ֆրանսուա Գոբբեի, Լյուդվիգ Բյուխների, Շառլոտա Բրոնտեի և այլոց դիմանկարներին:

«Որվան երեկի անձնավորությունները» շարքում ներկայացնելով էմիլ Վերհարնի գրական դեմանկարը, ժանրին ընորոշ դիպուկությամբ, սեղմ ու բնութագրիչ տողերում, ինչպես հատուկ էր Զոհրապին («Մանթ դեմքեր»), տայես է գրողի հուզաշխարհի, ներքին խռովումների պատկերը. «Որքան դառնություն, որքան սուղ կա այս դեմքին վրա: Թանձրորեն մտահող, վշտադին սատուրնական մըն է ան, անիրանալի երազներուն և ցնորքներուն հայի-

²⁴ Աղատամարտ, 1911, № 50, էջ 787, 788:

²⁵ Լ և ո ն Շ ա ն թ, Ը ն տիր երկեր, Երեան, 1988, էջ 6:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Հեռու մնալով ֆրանսիական մտածողների (Ռեմի դը Գուրմեն, Ժյուլ Լեմետր, Մարսել Եվոր, Սենտ-Բյով) ծայրահեղություններից, Հարությունյանն իր դիմանկարներում («Եղիա Տեմիրճիպաշյան», «Մասթոս Մամուրյան», «Գալուստ Կոստանդյան», «Մկրտիչ Աճեմյան», «Արամ Անտոնյան», «Ալեքսանդր Փանոսյան» և այլն), ինչպես նաև դիմանկարային ժանրին ընորոշող կառուցաներ ունեցող այլ հարված-գրախոսություններում հանդես է առնալ քննադատական-վերլուծական մեթոդով:

ցողութիւն սեջ մխիթարված»³⁰, Եթէ Զոհրայի նպատակը «Ծանոթ դեմքերում» անձը ներկայացնելն է, պատկերելը, ապա Արտ. Հարությունյանը, գեմքի բնութագրումից բացի, քննում է ուսումնասիրվող հեղինակի երկի արժեքը: Միմվոլիստական դրական ուղղութիւն հասուն ըմբռնումով վերլուծվում, գնահատվում է Վերհարնի ստեղծագործական ժառանգութիւնը, ներկայացվում են նրա գրական նշանակությունը՝ ձայնաքննիր ձևավորման իմացարանական ակունքները: «Յլամանգուհիները» ժողովածուն (1883) արժեքավորվում է որպէս հայրենի գլուղաշխարհի ծալքերը բացահայտող բանաստեղծական վավերապիւր, «Վանականներ» շարքի համար ընդգծվում է միստիկ արամագրութիւնները՝ «Վերհարնի շարքի համար ընդգծվում է միստիկ արամագրութիւնները, «Երեկոներ» (1887), «Նորտակումներ» (1888), «Սև ջահեր» (1890) երեքգրութիւն էջերում հեղինակը ղպում է դառնակսկիծ, մտախոհ մեղամաղձութիւն: Ըստ քննադատի, Վերհարնի ծանր աշխատանքի տարիներին (Լոնդոնում) ստեղծված երկերը կոսում են դոկոլի անկումային տրամագրութիւնների դոկոլը: «Յրանսիական գրականութիւն» հոդվածում, խոսելով ղեկագինտական գրական ուղղութիւն մասին, Արտ. Հարությունյանը նշում է, որ այն «հիվանդագին ու նորին դարգացման արտահայտութիւն» լինելով հանդերձ, «գրաբնշջման ուղադրավ փուլ մըն է»³¹: Վերհարնի անկումային արամագրութիւնների վերլուծութիւնը հաջորդում է տաղանգի հասունացման ընդգծումը. «Այս ճարտարվեստի, ընկերային թշվառութիւն, շոգի, մոխի ու մրուրի միջավայրները՝ նոր ու տարօրինակ տպավորութիւններով կը տոգորին ղինքը, որ փղոսկրյա աշտարակին առանձնասեր մենակայացը շէր»³²: Բանաստեղծի մտածողութիւն, հասարակական կողմնորոշման մեջ նկատվում է աղղլլին, կենսական հարցերի լուծման յահանջ:

Վերհարնի: «Երեկոնական գլուղներ» շարքում (1894) քննադատը նկատում է որակական նոր աճ, գնահատում հղկված լեղուն ու դասական քերականական ձևերի օգտագործումը: Քերթողի մյուս շարքերում ևս գնահատվում են տառապանքի ու հուսերի, լուսահեռ գալիքի կանխատեսումները: «...Որովհետև, ըստ նրա (Վերհարնի—Ա. Ն.),—գրում է Ստ. Յվայը,—ապագայի մեջ էին թաքնված նորագույնի ողջ նոր հնարավորութիւնները»:

Կառուցման յուրահատկութիւնը ուղադրավ է նաև «Ուայլտ Ուիթմեն» (1819—1892) գրախոսութիւնը: Գրական-քննադատական, հուրագրական-կենսագրական ընդլթի հոդվածը բացահայտում է ոչ միայն Ուիթմեն մարգուանհատական հնքնատիպութիւնը, այլև վերլուծում, արժեքավորում է նրա ստեղծագործական ժառանգութիւնը:

Ամերիկյան գրականութիւն պատմութիւն մեջ ճիշտ լի գնահատվել Ուիթմենի հասարակական-քաղաքական գիրքորոշումը: Գրականութիւն հայտնի պատմագիր Հենրի Սեյգելա Կենրին այն կարծիքն էր, թե Ուիթմենը հակված է ամերիկյան ղավթողական քաղաքականութիւն պաշտպանութիւնը: Մի այլ գրականագետ, Լիգի Մ. Կլարկը, կարծում էր, որ Ուիթմենն ունի հակադեմոկրատական, միծապետական ձգտումներ»³³:

Արտ. Հարությունյանը բարձր է գնահատում Ուիթմենի պոեզիայի հարատւութիւնն ու նորարարութիւնը, հետորական ողին: Քննադատն առանձնացնում է «Պատարախանողին երպր» քերթվածը, ուր հեղինակը ներկայացվում է որպէս աշխատավոր ժողովրդի իրավունքների պաշտպան, նրա մեծութիւնը դովիրգող, հավասարութիւն գատը պաշտպանող գեմոկրատ երգիչ:

³⁰ Արևելյան մամուլ, 1907, № 11, էջ 267:

³¹ Գիշերվան ճամփորդը, էջ 350:

³² Արևելյան մամուլ, 1907, № 11, էջ 270:

³³ Ամերիկյան գրականութիւն երախաւորներէից Կ. Սենդերգը, Ս. Սիլենը բարձր են գնահատել Ուիթմենի՝ ղանութիւն հանգեպ ունեցած բողքն ու բողվալը (ան՝с Проблема истории литературы США, М., 1964, էջ 170—171, իսկ ուս գրող Կ. Զուկովսկին Ուիթմենի համարում է «...տիեզերական ժամանակների ու տարածութիւն բառաբանը» (ան՝с Корней Чуковский, Мой Интмен, М., 1966, с. 19):

Քննադատը ընդգծում է նաև «ևսուտի անրևներ» ժողովածուի համաշխարհային նորարարական արժեքը, ոճական ինքնատիպությունը՝ նա Ուիթմենին անվանում է «Նոր աշխարհի արուբադուրը», «Նոր աշխարհի տիաարնը» և 1908 թվականին կանխում բոլոր հակառակ դնահատումները. «...ինքը (Ուիթմենը—Ա. Ն.) Մարգարեն է, նոր ժամանակներու Մարգարեն, որ զեղածիծաղ վաղորդայններու ավետիսը կքնարերգե, կենսալիր ու անդողվելի հավատքով մը: ...Ուիթմեն աշխարհի մեծագույն ու ամենեն եզակի բանաստեղծներեն մին է...: Քերթողը բոլոր ժամանակներուն, բոլոր երկիրներուն ու բոլոր ցեղերուն»⁸⁴:

«Յրանսիական դրականություն» շարքում Արա. Հարությունյանն սեղորադարձել է նաև Շառլ Վազների «Պարզ կյանք» երկի վերլուծությունը⁸⁵:

Էսսե-գիմարնարի ձևով կառուցված հոգված-գրախոսականում քննադատը ներկայացնում է նաև Ֆրանսիացի սիմվոլիստ Բանտուստեղծ Շառլ Գեոնի (1873—1907) ստեղծագործական վաստակի արժեքն ու յուրատիպությունը: Ընդունելով հանդերձ, որ նա չի կարող մրցել Լըկոնս դը Լիլի, Հյուգոյի, Բոդլերի արվեստի շափանիչների հետ, այնուամենայնիվ, Հարությունյանը գնահատում է նրա քերթվածների զգացմունքայնությունը, նշում, որ դրանք կրում են բանաստեղծի տղխարհայացքի, պատկերացումների, հուղականության դրոշմը: «Շառլ Կոնեն Ֆրանսիացի բանաստեղծ մըն էր, շատերուն նման,—դրում է քննագատը,—բայց բացառիկ բան մը կա իր մոտ, իր նուրբ ու ազնիվ հոգին՝ հոգիներու տիեզերական հաղորդակցության բյուրախե կամուրջ մ'էր»⁸⁶: Յրանսիական դրականության պատմության մեջ Շառլ Գեոնին ներկայացվում է որպես ողմանտիկ բանաստեղծ, որի քերթվածներն ունեն մեղամաղձոտ շունչ, բաբախում են ղգայական սիրո նրբրանգներով, իգեալականի ձգտումներով⁸⁷: Արտաշես Հարությունյանը ևս նկատում է. որ «Իր (Գեոնի—Ա. Ն.) կանխահաս տաղանդը խոհուն, թախծալից ու մելամաղձություն մըն էր: Նիստ գղայուն էր, նույնիսկ յափազանց ոյուրաղաց... անհունորեն վշտարեկ ու քաղցրորեն արտնայադին»⁸⁸:

Այսպիսով, Արտաշես Հարությունյանի գրաքննադատական օնոանգությունը աչքի է ընկնում գրականության պատմության ու տեսության, փիլիսոփայության հիմնադրո իմացություն մը: Նա շունի տպավորությունների ազդեցություն մը գրված «վերլուծումներ»: Գրախոսե քննադատական հոգվածներում համադրվում է երկի գեղագեական, բարոյաէթիկական, փիլիսոփայական ու պատմական օրինաչափությունների դիաակսն վերլուծությունը: Կոնկրետ գեղարվեստական խնդիրներ քննարկելով, նա պատկերագրում է տալիս անցյալի գրական քննադատության որոշակի փուլի մասին: Սուր դիտարկանություն մը Գրական-հասարակական պրոցեսում հայտարարի բերվող քննադատի գնահատումներն ու ընդհանրացումները ներկայումս էլ այժմեական են և ակնառու՝ իրենց օբյեկտիվ նշանակություն մը: Առտ. Հարությունյանի դրաքննադատական հոգվածները սարղում են գրողի հասարակական ու գեղարվեստական դիրքորոշումը, ներկայացնում են դարասկզբի 20-ամյա ժամանակահատվածի արեմտահայ մշակութային կյանքը և ձեռք են բերում գրական-պատմական կարևոր, նաև արդիական նշանակություն:

⁸⁴ Արա. Հարությունյան, Գիշերվան ճամփորդը, էջ 362—363:

⁸⁵ Բյուզանդիոն, 1907, 3202:

⁸⁶ Նույն տեղում, Մ 3201:

⁸⁷ Տե՛ս Literature Française, т. 2. Paris, 1849, p. 380.

⁸⁸ Բյուզանդիոն, 1907, Մ 3201:

ЛИТЕРАТУРНЫЙ ПРОЦЕСС НАЧАЛА XX СТОЛЕТИЯ
В ОЦЕНКЕ АРТАШЕСА АРУТЮНЯНА

А. Г. НАГАПЕТЯН

Р е з ю м е

Велика роль западноармянского критика Арташеса Арутюняна в оценке литературного процесса начала XX века. Он правдиво оценивает художественные особенности произведений З. Есяян, Ал. Ширванзаде, Р. Зардаряна, А. Чобаняна, Л. Шанта, А. Арутюняна, а также анализирует литературное творчество Реми де Гурмона, Шарлотты Бронте, Эмиля Верхарна, У. Уитмена и других.